

Հաստատված է  
ՀԱԱՀ գիտական խորհրդում  
„-----„ ----- 2016 թ.  
(արձանագրություն № )

Վավերացնում եմ  
ոեկտոր  
Ա. Թարվերդյան  
„-----„ ----- 2016 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ  
Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Համալսարանի ֆակուլտետը ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, իրականացնում է ուսումնական, մանկավարժական, մեթոդական, գիտական, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական աշխատանքներ և նպաստում դրանց կատարելագործմանը, ըստ սահմանված չափանիշների մշակում է իր հաստիքացուցակը:
2. Ֆակուլտետը ստեղծվում, վերակառուցվում և լուծարվում է համալսարանի հիմնադրամի որոշմամբ և կանոնադրությամբ:
3. Ֆակուլտետը ձևավորվում է ըստ մասնագիտական գործունեության բնույթի՝ 200 և ավելի ուսանողների առկայության դեպքում:

**II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

4. Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից և ուսումնական, գիտական ու օժանդակ այլ օղակներից:
5. Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի գիտական խորհուրդը, դեկանատի խորհուրդը և դեկանը:

6. Ֆակուլտետի ղեկանատի հաստիքային կազմի մեջ մտնում են ղեկանը, տեղակալները, օպերատորը, գործավարները:

7. Ֆակուլտետի գիտական խորհուրդը քննարկում է ֆակուլտետի կանոնադրությունը և այն ներկայացնում հաստատման, ընտրում է ֆակուլտետի ղեկանին կամ սահմանված կարգով քննարկում և համալսարանի գիտական խորհրդի ընտրությանն է ներկայացնում ղեկանի թեկնածուներին, լսում է ղեկանի ամենամյա հաշվետվությունները և գնահատում է նրա գործունեությունը:

Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմը, նրա ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է ֆակուլտետի կանոնադրությամբ:

Ֆակուլտետի գիտական խորհրդում ընդգրկվում են ֆակուլտետի ղեկանը (գիտխորհրդի նախագահ), ղեկանի տեղակալը(ները), գիտխորհրդի քարտուղարը, ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահը, ֆակուլտետի ամբիոնների վարիչները, երկարամյա աշխատանքային փորձ ունեցող պրոֆեսորներ, ֆակուլտետի ուսխորհրդի նախագահը և արհմիութենական կազմակերպության ներկայացուցիչը: Գիտխորհրդի կազմի 25%-ը համալրվում են ֆակուլտետի ուսանողներից:

**8. Ֆակուլտետի գիտական խորհուրդը.**

1) ռեկտորին է ներկայացնում առաջարկություններ ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ (լաբորատորիաներ, բաժիններ) և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմավորելու, լուծարելու վերաբերյալ.

2) լուծում է ֆակուլտետի ուսումնական, գիտական, կառավարման աշխատանքների և այլ գործունեությանը վերաբերվող հարցեր.

3) ռեկտորին և համալսարանի մեթոդական խորհրդին է ներկայացնում ֆակուլտետի ուսումնական պլանները՝ համալսարանի գիտական խորհրդում հաստատելու համար.

4) ընտրում է համալսարանի գիտական խորհրդում ընդգրկվող ֆակուլտետի ներկայացուցիչներին;

5) լուծում է սույն կանոնակարգից բխող՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական, գիտահետազոտական խորհրդատվական և գիտաարտադրական գործունեության հետ կապված այլ հարցեր.

6) մասնակցում է համալսարանի գործունեության վերլուծության և հավատարմագրման աշխատանքներին:

9. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստը հրավիրվում է ամիսը մեկ անգամ և համարվում է իրավագոր՝ նրա անդամների 2/3-ի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են ֆակուլտետի գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ֆակուլտետի խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի ղեկավարության, աշխատողների, ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների (հայցորդների), դոկտորանտների համար:

Գիտական խորհուրդը կարող է հրավիրել արտահերթ նիստեր ըստ անհրաժեշտության:

5. Դեկանատի խորհուրդը դեկանի ղեկավարությամբ գործող մարմին է, որը ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակաշրջանում քննարկում և լուծում է ֆակուլտետի գործունեության ընթացիկ հարցերը:

Դեկանատի խորհրդի կազմի մեջ մտնում են դեկանը, տեղակալը (ներք), ամբիոնների վարիչներ, ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահը, ֆակուլտետի արհմիութենական կազմակերպության ներկայացուցիչը:

Դեկանատի խորհրդի կազմը դեկանի ներկայացմամբ հաստատվում է ռեկտորի հրամանով:

11. Ֆակուլտետի դեկանը հանդիսանում է ֆակուլտետի գործունեության կազմակերպողն ու ղեկավարը իր իրավասությունների սահմաններում և սույն կանոնադրության համաձայն:

12. Ֆակուլտետի դեկանն ընտրվում է համալսարանի գիտական խորհրդում՝ (կամ ֆակուլտետի գիտական խորհրդում, եթե դրա մասին համալսարանի գիտական խորհուրդն ընդունում է որոշում) փակ (ներքուհական) մրցույթի հիման վրա, փակ գաղտնի քվեարկությամբ: Ընտրության արդյունքների հիման վրա դեկանին պաշտոնի է նշանակում համալսարանի ռեկտորը և սահմանված կարգով կնքում է պայմանագիր 5 տարի ժամկետով: Ֆակուլտետի դեկանն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավելի քան երկու 5-ամյա ժամկետ անընդմեջ, դեկանի թեկնածուի տարիքը չպետք է գերազանցի 65 տարին: Դեկանի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված դեկանների ընտրության կանոնակարգին համապատասխան:

## Դեկանը՝

- Դեկավարում է ֆակուլտետի կրթական բարեփոխումների, գիտական, արտադրական, միջազգային և այլ գործունեությունը:
  - Ապահովում է համալսարանի և ֆակուլտետի գիտական խորհուրդների ու ռեկտորատի որոշումների կատարումը:
  - Ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալի (ների), ֆակուլտետի գիտխորհրդի քարտուղարի թեկնածությունները:
  - Վերահսկում է դասացուցակի կազմմանը և հսկում նրա իրականացմանը:
  - Կազմում է ընթացիկ և ամփոփիչ քննությունների ժամանակացույցները և հետևում դրանց կատարմանը:
  - Սահմանված կարգով կազմում է ուսանողներին կրթաթոշակ (այդ թվում նաև անվանական) նշանակելու, շրջափոխմանը, կուրսից կուրս փոխադրելու, ինչպես նաև ավարտական կուրսերի ուսանողներին պետական ատեստավորմանը մասնակցելու հրամանները և ներկայացնում ռեկտորի հաստատմանը:
  - Առաջարկություններ է ներկայացնում վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի զեղչի վերաբերյալ:
  - Ֆակուլտետի գործունեության մասին ներկայացնում է տարեկան հաշվետվություն:
  - Հանդիսանում է համալսարանի գիտական խորհրդի և ռեկտորատի անդամ:
13. Ֆակուլտետում 300 և ավելի ուսանողների առկայության դեպքում աշխատանքներին օժանդակելու նպատակով սահմանված է դեկանի տեղակալի մեկ հաստիք, 500-ից ավելի ուսանողների դեպքում՝ տեղակալի երկու հաստիք: Դեկանի տեղակալը ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ է և կարող է ընդգրկվել ուսանողների պետական ատեստավորման հանձնաժողովի կազմում: Դեկանի տեղակալին (գիտ. թեկնածու, դոցենտ) պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է համալսարանի ռեկտորը, պրոռեկտորի և դեկանի ներկայացմամբ: